

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մասնակցություն միջոցառումներին

- ✓ 2017թ. հուլիսի 4-5-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը և նույն բաժնի գլխավոր մասնագետ Ս. Հունանյանը մասնակցել են ք. Վիլնյուսում (Լիտվա) կայացած «Աշխատանքի շուկայի վիճակագրությունը Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների համար» խորագրով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2017թ. հուլիսի 6-7-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը մասնակցել է ք. Բուդվայում (Չեռնոգորիա) կայացած «Պաշտոնական վիճակագրության մասին մոդելային օրենքի կիրառման փորձի փոխանակում» խորագրով ռազմավարական կառավարման սեմինարին,
- ✓ 2017թ. հուլիսի 16-21-ը ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Մարաքեշում (Մարոկկո) կայացած Միջազգային վիճակագրական ինստիտուտի 61-րդ Համաշխարհային վիճակագրության Կոնգրեսին և 2017թ. հուլիսի 14-15-ը՝ Կոնգրեսի ներքո «Պաշտոնական վիճակագրության անկախությունն ու ամբողջականությունը. օգտագործելով գործընկերների փորձագիտական գնահատումները և արտապատկերման գործիքը՝ գնահատել վիճակագրական համակարգի պրոֆեսիոնալ անկախությունն ու այլ տարրերը» խորագրով կարճ դասընթացին,
- ✓ 2017թ. օգոստոսի 7-19-ը ՀՀ ԱՎԾ Հայաստանի ժողովրդագրության և առողջապահության հետազոտության ծրագրի ղեկավար Տ. Գևորգյանը և նույն ծրագրի տեխնիկական ղեկավար Ա. Քոսակյանը մասնակցել են ք. Բալիում (Ինդոնեզիա) կայացած Ընտրանքի և ցուցակագրման տարածաշրջանային սեմինարին,

- ✓ 2017թ. օգոստոսի 28-31-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Բանգկոկում (Թաիլանդ) կայացած «Բնակչության և սոցիալական վիճակագրության հարցերով տարածաշրջանային համակարգող խմբի» առաջին հանդիպմանը և «Տվյալներ, որոնք չեն անտեսում ոչ մեկին» խորագրով փորձագիտական աշխատաժողովին,

- ✓ 2017թ. օգոստոսի 28-ից սեպտեմբերի 1-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Համբարձումյանը մասնակցել է ք. Մոնպելյեում (Ֆրանսիա) կայացած «Շրջակա միջավայրի միասնական տեղեկատվական համակարգ – Արևելք» (ENI SEIS II East) ծրագրի շրջանակում կազմակերպված բնապահպանական հաշիվների վերաբերյալ մասնագիտական ուսուցման դասընթացին:

Առաքելություններ

- ✓ 2017թ. հուլիսի 4-7-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Դանիայի վիճակագրության ծառայության ներկայացուցիչ, ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի ղեկավար Շարլոտ Յուլ Հանսենը և 2017թ. հուլիսի 6-7-ը Դանիայի վիճակագրության ծառայության տնօրեն Սորեն Շոնինգ Անդերսենը «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – II փուլ» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի Կառավարող Կոմիտեի ութերորդ նիստին և ծրագրի փակման արարողությանը մասնակցելու նպատակով,
- ✓ 2017թ. հուլիսի 10-11-ը ՀՀ ԱՎԾ-ում էր EMS Consulting կազմակերպության փորձագետ Վիմ Վամ Բրյուսեգենը ԵՄ Բնապահպանական միասնական տեղեկատվական համակարգ II ծրագրի շրջանակում թափոնների վիճակագրության վերաբերյալ քննարկումներ իրականացնելու նպատակով,
- ✓ 2017թ. օգոստոսի 28-ից սեպտեմբերի 1-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Մոլդովայի ազգային վիճակագրական բյուրոյի փորձագետներ Սվետլանա Բուլգակը և Նատալյա Գրիդնյովան ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) «Արդյունաբերության վիճակագրության կատարելագործում և ԱՊՀ երկրներում արդյունաբերության զարգացման վերլուծության համար վիճակագրական ցուցանիշների մշակում» տարածաշրջանային ծրագրի շրջանակում արդյունաբերության վիճակագրության բարելավման հարցերի քննարկման նպատակով:

Տեղային սեմինարներ

- ✓ 2017թ. հուլիսի 3-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը, ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիգյանը, վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ք. Պողոսյանը, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը, տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Լ. Մարկոսյանը, տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի պետ Գ. Թորոսյանը և գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի գլխավոր մասնագետ Զ. Ավետիսյանը մասնակցել են ք. Երևանում կայացած ԿԶՆ տնտեսական ոլորտային ենթախմբի 5-րդ աշխատանքային նիստին՝ նվիրված Նպատակ 17 «Ուժեղացնել կայուն զարգացման իրագործման միջոցները և ակտիվացնել գլոբալ գործընկերությունը հանուն այս նպատակի» ներառված թիրախներին և ցուցանիշներին,
- ✓ 2017թ. հուլիսի 4-ին ՀՀ ՎՊԽ անդամներ Ա. Սաֆյանը և Յու. Պողոսյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Լ. Մարկոսյանը մասնակցել են ք. Երևանում կայացած ԿԶՆ սոցիալական ենթաժողովի աշխատանքային խմբի նիստին,
- ✓ 2017թ. հուլիսի 12-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը և աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել են ք. Երևանում կայացած ՄԱԿ-ի «Կայուն զարգացման նպատակներ» համաշխարհային գործընթացի հայաստանյան աշխատանքները կանոնակարգելու նպատակով ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի իրավական և ժողովրդավարական հավասարության ենթախմբի հանդիպում-քննարկմանը,
- ✓ 2017թ. հուլիսի 12-ին ՀՀ ՎՊԽ անդամներ Ա. Սաֆյանը և Յու. Պողոսյանը մասնակցել են ք. Երևանում կայացած ԿԶՆ տնտեսական ոլորտային ենթախմբի 6-րդ աշխատանքային նիստին՝ նվիրված Նպատակ 7-ի ներքո թիրախների և ցուցանիշների քննարկմանը,

- ✓ 2017թ. հուլիսի 17-ին ՀՀ ԱՎԾ ԱՎԾ աշխատակազմի տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Ա. Մարտիրոսյանը, նույն վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ Կ. Եսայանը, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետ Ա. Թոխաթյանը, առաջատար մասնագետ Ա. Ավետիսյանը, աշխատանքի վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ս. Հունանյանը, նույն բաժնի առաջին կարգի մասնագետ Ս. Զեյնալյանը, տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Գալստյանը և երկրորդ կարգի մասնագետ Լ. Ավետիսյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Հետազոտությունների մեթոդաբանություն և միգրացիոն տվյալների այլընտրանքային աղբյուրները» խորագրով դասընթացին,
- ✓ 2017թ. հուլիսի 18-19-ը ՀՀ ԱՎԾ ԱՎԾ աշխատակազմի տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Ա. Մարտիրոսյանը, նույն վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ Կ. Եսայանը, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետ Ա. Թոխաթյանը, առաջատար մասնագետ Ա. Ավետիսյանը, տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Լ. Մարկոսյանը, նույն բաժնի առաջատար մասնագետ Ա. Բադալյանը, առաջին կարգի մասնագետ Ա. Գալստյանը և երկրորդ կարգի մասնագետ Լ. Ավետիսյանը, բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ. Արևշատյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետ Ն. Գրիգորյանը, աշխատուժի հետազոտության ղեկավար Գ. Մելիքսեթյանը, աշխատանքի վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Ս. Զեյնալյանը, սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Գրիգորյանը, նույն բաժնի առաջատար մասնագետ Ն. Մանդալյանը, առաջին կարգի մասնագետ Ա. Համբարձումյանը և երկրորդ կարգի մասնագետ Ս. Հովսեփյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Հետազոտությունների մեթոդաբանություն և միգրացիոն տվյալների այլընտրանքային աղբյուրները» խորագրով դասընթացին,
- ✓ 2017թ. հուլիսի 17-ին ՀՀ ԱՎԾ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բադդասարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Կայուն զարգացման նպատակների իրավական և ժողովրդավարական հավասարության ենթախմբի աշխատանքային նիստին՝ նվիրված նպատակ 4-ի ներքո թիրախների և ցուցանիշների (Ապահովել ներառական և համապատասխան որոկյալ կրթություն բոլորի համար և խթանել ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորություններին) քննարկմանը,

- ✓ 2017թ. հուլիսի 18-19-ը ՀՀ ԱՎԾ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Կայուն զարգացման նպատակների իրավական և ժողովրդավարական հավասարության ենթախմբի աշխատանքային նիստին՝ նվիրված նպատակ 5-ի ներքո թիրախների և ցուցանիշների (Հասնել գենդերային հավասարության և զորացնել բոլոր կանանց ու աղջիկներին) քննարկմանը,
- ✓ 2017թ. հուլիսի 21-ին ՀՀ ԱՎԾ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Կայուն զարգացման նպատակների իրավական և ժողովրդավարական հավասարության ենթախմբի աշխատանքային նիստին՝ նվիրված նպատակ 4-ի ներքո թիրախների և ցուցանիշների (Ապահովել ներառական և համապատասխան որոկյալ կրթություն բոլորի համար և խթանել ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորություններին) քննարկմանը,
- ✓ 2017թ. հուլիսի 24-26-ը ՀՀ ԱՎԾ ԱՎԾ աշխատակազմի թվով 36 աշխատակից մասնակցել են ք. Ծաղկաձորում կայացած «Աջակցություն գյուղատնտեսական համատարած հաշվառման իրականացմանը Հայաստանում» ՄԱԿ-ի զարգացման ծրագրի շրջանակում իրականացված «Գյուղատնտեսական համատարած հաշվառումը և գյուղատնտեսության վիճակագրության զարգացման հեռանկարները» խորագրով ուսուցողական սեմինարին,
- ✓ 2017թ. հուլիսի 25-ին ՀՀ ԱՎԾ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը և նույն բաժնի գլխավոր մասնագետ Ա. Թոխաթյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Երեխայի սեռի խտրական ընտրության երևույթի տարածվածության, հետևանքների և պատճառների վերաբերյալ որակական և քանակական հետազոտությունների և տվյալների վերլուծության մեթոդական ուղեցույցի մշակում» խորագրով աշխատանքային քննարկմանը,
- ✓ 2017թ. հուլիսի 25-ին ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Կայուն զարգացման նպատակների 5-րդ նպատակի շուրջ ձևավորված աշխատանքային խմբի հանդիպմանը,
- ✓ 2017թ. հուլիսի 25-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի թվով 20 աշխատակից մասնակցել են ք. Երևանում կայացած Ազգային շահագրգիռ կողմերի համար ռեգիոնալ համախառն ներքին արդյունքի վերաբերյալ աշխատաժողովին,

- ✓ 2017թ. հուլիսի 27-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը, սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը և աշխատանքի վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Ս. Ջեյնալյանը մասնակցել են ք. Երևանում կայացած ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների ազգայնացման, միգրացիայի և զարգացման տեսանկյունից ԿԶՆ համատեքստում Հայաստանի համար սահմանված առաջնահերթությունների, այդ առաջնահերթությունների ազգայնացման և նրանց համար ցուցիչների մշակման հետ կապված խնդիրների քննարկման վերաբերյալ աշխատաժողովին,
- ✓ 2017թ. հուլիսի 27-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ. Արևշատյանը, մակրոտնտեսական ցուցանիշներ և ազգային հաշիվների բաժնի գլխավոր մասնագետ Ն. Աստվածատուրովան և գյուղատնտեսության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ռ. Վարդանյանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած ԵԱՏՄ-ի «2008թ. Ազգային հաշիվների համակարգ»-ի միջազգային ստանդարտների ներդնման և վիճակագրական դասակարգիչների գծով աշխատանքային խմբերի առաջին համատեղ նիստին,
- ✓ 2017թ. հուլիսի 27-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Նալբանդյանը և վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Լ. Կարապետյանը մասնակցել են ք. Երևանում կայացած ԿԶՆ ազգայնացման գործընթացի շրջանակներում ձևավորված ոլորտային ենթախմբի հետ ՄԱԶԾ (Նյու Յորք) քաղաքականության և ծրագրերի աջակցության գրասենյակի բարձրաստիճան պատվիրակության հանդիպմանը,
- ✓ 2017թ. հուլիսի 28-ին ՀՀ ՎՊԽ անդամներ Ա. Սաֆյանը և Յու. Պողոսյանը մասնակցել են ք. Երևանում կայացած ԿԶՆ զարգացման նպատակներն ազգայնացնող միջգերատեսչական խմբի հանդիպմանը,
- ✓ 2017թ. հուլիսի 28-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիզյանը, վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ք. Պողոսյանը, տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Լ. Մարկոսյանը և տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի պետ Գ. Թորոսյանը մասնակցել են ք. Երևանում կայացած ԿԶՆ տնտեսական ոլորտային ենթախմբի աշխատանքային նիստին՝ նվիրված Նպատակ 17-ի ներքո թիրախներին և ցուցանիշներին,

- ✓ 2017թ. հուլիսի 31-ից օգոստոսի 2-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի թվով 38 աշխատակից մասնակցել են ք. Ծաղկաձորում կայացած «Աջակցություն գյուղատնտեսական համատարած հաշվառման իրականացմանը Հայաստանում» ՄԱԿ-ի զարգացման ծրագրի շրջանակում իրականացված «Գյուղատնտեսական համատարած հաշվառումը և գյուղատնտեսության վիճակագրության զարգացման հեռանկարները» խորագրով ուսուցողական սեմինարին,
- ✓ 2017թ. օգոստոսի 1-ին ՀՀ ՎՊԽ անդամներ Ա. Սաֆյանը և Յու. Պողոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը և պարենային ապահովության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավետիսյանը մասնակցել են ք. Երևանում կայացած ԿԶՆ տնտեսական ոլորտային ենթախմբի 9-րդ աշխատանքային նիստին՝ նվիրված Նպատակ 12-ի ներքո թիրախներին և ցուցանիշներին,
- ✓ 2017թ. օգոստոսի 3-ին ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ԿԶՆ 5-ի շուրջ ձևավորված աշխատանքային խմբի հերթական հանդիպմանը,
- ✓ 2017թ. օգոստոսի 8-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը, աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը և տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Լ. Մարկոսյանը մասնակցել են ք. Երևանում կայացած ԿԶՆ 5-ի շուրջ ձևավորված աշխատանքային խմբի հերթական հանդիպմանը,
- ✓ 2017թ. օգոստոսի 9-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ԿԶՆ Նպատակ 16-ի շուրջ ձևավորված աշխատանքային խմբի հերթական հանդիպմանը,
- ✓ 2017թ. օգոստոսի 11-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը, պարենային ապահովության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավետիսյանը, արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի պետ Ա. Անանյանը, ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիզյանը, վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ք. Պողոսյանը, տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի պետ Գ. Թորոսյանը, տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Լ. Մարկոսյանը, աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը և սոցիալական ոլորտի և բնապահպանության

վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել են ք. Երևանում կայացած ԿԶՆ տնտեսական ոլորտային ենթախմբի ամփոփիչ (10-րդ) նիստին՝ ենթախմբի կողմից դիտարկվող բոլոր Նպատակների (7,8,9,12,17) ներքո թիրախների և ցուցանիշների ազգայնացման վերջնական փաթեթի քննարկմանը և ԿԶՆ հայաստանյան գործընթացները կանոնակարգող միջգերատեսչական հանձնաժողովին այն ներկայացնելու վերաբերյալ որոշման ընդունմանը,

- ✓ 2017թ. օգոստոսի 14-16-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի թվով 35 աշխատակից մասնակցել են ք. Երևանում կայացած «Աջակցություն գյուղատնտեսական համատարած հաշվառման իրականացմանը Հայաստանում» ՄԱԿ-ի զարգացման ծրագրի շրջանակում իրականացված «Գյուղատնտեսական համատարած հաշվառումը և գյուղատնտեսության վիճակագրության զարգացման հեռանկարները» խորագրով ուսուցողական սեմինարին,
- ✓ 2017թ. օգոստոսի 16-18-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի թվով 35 աշխատակից մասնակցել են ք. Երևանում կայացած «Աջակցություն գյուղատնտեսական համատարած հաշվառման իրականացմանը Հայաստանում» ՄԱԿ-ի զարգացման ծրագրի շրջանակում իրականացված «Գյուղատնտեսական համատարած հաշվառումը և գյուղատնտեսության վիճակագրության զարգացման հեռանկարները» խորագրով ուսուցողական սեմինարին,
- ✓ 2017թ. օգոստոսի 17-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի պետ Ա. Անանյանը, պարենային ապահովության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավետիսյանը, տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Լ. Մարկոսյանը, գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Մ. Երիցյանը, սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Հակոբյանը և գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ռ. Վարդանյանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած Ազրոարդյունաբերական համալիրի խորհրդատվական կոմիտեի «Գիտատեխնիկական համագործակցություն» ուղղությամբ աշխատանքային խմբի նիստին,
- ✓ 2017թ. օգոստոսի 28-29-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի բաժնի պետ Ք. Պողոսյանը մասնակցել է ք. Դիլիջանում կայացած ՌԴ կենտրոնական բանկի աշխատակիցների հետ վճարային հաշվեկշռի հայելային վիճակագրության իրականացման նպատակով աշխատանքային հանդիպմանը: